ՄԱՆՐ ԳԻՏԵԼԻՔ

ԱԶԳԱՅԻՆ ԿԱՄ ՀԱՅԱԽՕՍ ԱՌԱԾՔ

Ընկերըդ գեղէցը վէր կալ, հացդ տաշտիցը :
Ընչանք (ինչուան որ) չի գայ յետինը չի յիշուիլ առաջինը :
Ընչանք երեխէն լաց չի ըլնի, մէրը ծիծ չի տալ :
Խալքի աչքը քեզ համար լոյս չի տալ :
Խաղ շատ գիտեմ ամա չէն (ձայն) չունեմ :
Խլընքոտին ծուխն էր մնանայ :
Խօսքը ցան (վառելիք) փուլը չի, ցան թոփ անելն այ :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

Գինովութեան դեղ :

Մարդկացին ընկերութեան վնասակար ախտերէն մէկն ալ գինովութիւնն է, որ շատ չարեաց պատճառ կ'ըլլայ : Մենք արդէն այսպիսի սոսկալի ախտի մը բարոյական դարմաններուն վրայ օրագրիս առաջին հատորին մէջ [1] խօսած ըլլալով, հոս բնական դարման մըն ալ ցուցնենք զորն որ Շվալիէ անունով գաղղիացին մօտերս գտեր է, որ մէկէն գինովութիւնը կ'անցընէ :

Այս դեղիս բաղադրութիւնը շատ պարզ է, վասն զի անուշադրի քացախուտ [2] և շաքարի ջուր է. և այս երկու նիւթերուն համեմատութիւնն է 160 տրամ շաքարի ջուր և 15 տասնորդատրամ անուշադրի քացախուտ, որ մէկտեղ խառնելով գինովին կը խմցունեն :

ԲՆԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

Ինչո՞ւ խցի մը վանդակափեղկերէն նայելով դրսէն անցնողները որոշ կը տեսնենք, և անոնք զմեզ չեն կրնար որոշ տեսնել.

— Վասն զի խցին լուսոյ ճառագայթները աւելի տկար են քան թէ դրսինները, որով անցորդները աւելի պայծառ լուսոյ մէջ գտնուելով՝ իրենց աչքին բիբը կը պզտիկնայ. անով խցէն ճառագայթած լուսոյ տկար շառաւիղները այն աստիճանի ազդեցութիւն չեն կրնար ընել անոնց վրայ որ կարող ըլլան ներսի առարկաները որոշ տեսնել : Բայց խցին մէջ գտնուողներուն աչքին բիբը աւելի ընդարձակած ըլլալով՝ ներսի լուսոյն նուազութեանը պատճառաւ, արտաքուստ եկած լուսոյ պայծառ ճառագայթները կրնան ընդունիլ, որով դրսի առարկաներն ալ որոշ կը տեսնեն : Ընդհակառակն գիշեր ատեն ճրագներով լուսաւորեալ խցի մը մէջ գտնուողներուն աչքին բիբը լուսոյ առատութեան պատճառաւ պզտիկցած ըլլալով դրսի առարկաներէն ճառագայթած լուսոյ տկար շառաւիղները աղէկ չեն կրնար ընդունիլ, որով դրսի առարկաներն ալ որոշ չեն կրնար տեսնել : Իսկ դուրսը գտնուողները խաւարի մէջ ըլլալով աչքերնուն բիբերը աւելի ընդարձակած կ'ըլլան, որով խցին մէջ եղողներն ալ որոշ կը տեսնեն :

[1] Տես երես 196 :
[2] Acétate d'ammoniaque.

ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

Ֆոնդընէլ գաղղիացւոյն գիւտն է թէ 9 թիւը ո՛ր և իցէ թուով բազմապատկեալ՝ ելած արտադրելոյն թուանշանաց գումարը դարձեալ 9 է. զոր օրինակ 2 անգամ 9ին արտադրեալն է 18. իսկ ասանը ութը ցըցունող 1 և 8 թուանշաններուն գումարն է 9. նոյնպէս $3 \times 9 = 27$, իսկ $2 + 7 = 9$. $4 \times 9 = 36$, իսկ $3 + 6 = 9$, և այլն :

Մէռան անունով գաղղիացին գտաւ թէ ո՛ր և իցէ թուանշանաց դիրքը փոփոխելով, տարբերութիւնը միշտ 9 է, բայց միապատիկ, կրկնապատկեալ, եռապատկեալ, և այլն : Զոր օրինակ, թէ որ 15 թուոյս թուանշանաց դիրքը փոփոխելով 51 ընենք, ասոր առաջիննէն ունեցած տարբերութիւնն է չորից 9. այսպէս 12 թիւը 21 փոփոխելով առաջիննէն ունեցած տարբերութիւնն է միանգամ 9, և այլն : Նոյնպէս են ուրիշ ամենայն թիւք :

ՀԱՆԵԼՈՒԿ

Հինգ տասցին զինք մեզ նըման,
Եւ ինքն ունի երկու բերան.
Բազում իրաց է նա նըշան,
Կու մեռանի և է կենդան :

ՏԻՐԱՏՈՒՐ ՎԱՐԴԱՊԵՏ

ԱՊՐԻԼԻ ՀԱՆԵԼՈՒԿՆ ԷՐ ՓՍՏՈՒՂ:

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ՂԱԶԱՐՈՒ